

## ԿՐՕՆԱԿԱՆ

### ՄՆՈՒՆԳ ՅԻՄՈՒՄԻ

### Ի ԲԵԹՂԵՏԷՄ.

Գուհ հրամանն ահեղատաստ մեծի կայսերն Օգոստոս  
Տարածէր, տարածանէր շուրջ զարհաւիրս և զտագնապ,  
Գատաւոր և քոտիկան և պաշտօնեայ զօրականօր  
Այր ի գործ փոյթ յառաջնն նախագրաւ գոյ ի հրաման:

Եւ ամբօխ հոծ և յախուռն զաստիճականն թողեալ տեղի  
Ի սաստէն բռնի ի չու ելեալ գնան հեծեալ, հետի.  
Տարայլմ գնան ի շէն, յաւան, ի գիւղ կամ ի քաղաք  
Մրտանել յաշխարհագիր՝ ուր հարց, հաւուցն են գամբարանք:

Մեր ձմեռն չէր թէ և անդ, սղօխք և սառն չէին ցրտին  
Բայց և թուն, եղեամն, անձրև խռոյնն զջերմինն զՊաղեստին.  
Եւ աղքատն յիւրն ի խրճիթ, աչօք առ դուրս ակրնդէտ՝  
Զարեւուն փութայ զլոյս և զկենսատուն տեսանել ջեր:

Կոյս ամբիծ և այր արդար թողուն զտուն աստիճական,  
Զգաւառն զԳալլիլիա և զՆազարէթ քաղաք ի նմա.  
Հասանել ի Հրէաստան ի ԲեթղեՏէմ քաղաք Գաւթի,  
Իբրև զարմ արքայական՝ անդ մրտանել յաշխարհագիր:

Հատանեն հետի զուղին, և ծնգին ոտք կուսին ամբիծ,  
Հեծէ նա և զհառաչանս չածէ յերև առ ամօթին,  
Մերթ ի գէմս փայլի շուշան, իբրև զձիւն սպիտակի,  
Մանուշակ համեստութեան մերթ սրողէ զայտս փոշտս:

Վարդ կարմիր բոսոր շրթուք, շիկնին երեսք ի շառագոյն,  
Նունչ նորա սրպէս զբոց՝ խամրէ զոնգացն զտամկութիւն.  
Մարիամ՝ անուն Կուսին, կոյս շնորհքնկալ Սրբոյ Հոգւոյն  
Այր արդար Յուսէփ անուն, խօսնայր հրեշտակ հսկող կուսին:

Ժամանեն ի ԲեթղեՏէմ, բայց չիք տեղի՝ յիջև անին,  
Աստ և անդ խնդրեն զաղար, անպատասպար մնան բնաւին.

Ըստ քաղաքն ելեալ արտաքս, յաստեղազարդն ի գիշերին,  
 Ուր անդեայք մակակաղէին՝ անդ՝ ի յայրին պատասպարին:

Կուսին անդ հասանի ժամ, երկունք ծննդեան ունին զնա  
 Յընանի Մանուկ սիրուն ի սրովբէից օրհնաբանեալ.  
 Կոյսն սուրբ ի խանձարուրս պատէ զՄանուկն աննման  
 Ի մարի հանգուցանէ զմարմնացեալն Աստուած և Բան:

Մայրենի ազու աչօք կայ կոյսն սուրբ առ Տղայիւն  
 Այրն արդար կայ ի թիկանց, զաչս առ Մանուկն ունելով պիշ.  
 Յուշ ածէ զբան տեսեան, զոր ազգ նմա հրեշտակն արար  
 Ըստ բանին՝ Յիսուս Փրկիչ անուն Մանկան կոչել խորհէր:

Եւ հովիւք, որք բացօթեայ հօտիցն իւրեանց կային ի սրահ  
 Զայն լուան ի հրեշտակէն, և ի փառաց ճեառն երկեան.  
 Քաջաչերս մատուցանէր, «մի երկնչիք, ասէր հրեշտակն,  
 Մնաւ ձեզ ի քաղաքիս այսօր Փրկիչ և Տէր Օծեալ»:

Ընդ աւետեացն ուրախութեան և բազմութիւն զօրաց երկնից  
 Օրհնէին զԱստուած հզօր և ասէին ընդ հրեշտակին.  
 «Աստուծոյ՝ փառք ի բարձունս և յերկիր՝ խաղաղութիւն,  
 Հաճութիւն՝ աստ ի մարդիկ», որք յաղեաից յալիս ծփին:

Զառաջինն՝ Մանկան ի տես հովիւք մատեան և խնդացին,  
 Եւ հրաշիցն եղեն քարոզ, և զլսողս զարմացուցին.  
 —Օ՛ն և մեք ընդաստուցեալ յաշխարհայինս ի զգայումանէ,  
 Լուիցուք յօժարակամ զհրեշտակին զօրհներգ վսեմ:

Մատիցուք առ Բանն Աստուած, և յաւետիս ծննդեան նորին՝  
 Մատուցուք ի պատարագ զսիրտ մաքուր սրբեալ յազտից  
 «Աստուծոյ՝ փառք ի բարձունս և յերկիր՝ խաղաղութիւն,  
 Հաճութիւն աստ ի մարդիկ», երգեսցուք ընդ հրեշտակին: